№ 137 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 **1894** ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 № 137

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻՒԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ „ՄՇԱԿ“ 23-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն ձևրքով, նոյն պրօգրամայով և նոյն ուղղութեամբ: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը 2 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Базарная и Барсовская улицы, Тифлисъ): Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Սօֆիա Սաֆիանեան Սահակեան, Դարիա և Եւա Գասպարեան Սահակեանները ցաւով սրտի յայտնելով առաջինը իր ամուսնու և վերջիններս իրանց հօր՝

ԳԱՍՊԱՐ ԻՍԱՀԱԿԻՉ ՍԱՀԱԿԵԱՆԻ

մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին հնարհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը, կիրակի օր, նոյեմբերի 27-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից, Բարօնսկայա փողոց № 15, դէպի Քամոյեանց ս. Գէորգ եկեղեցին: Հոգեհանգիստը կատարվելու է շաբաթ օրը, երեկոյեան 6 ժամին: Թաղումը լինելու է վերայի գերեզմանատանը: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ Թիւրքաց Հայաստանի մասին.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղատնտեսական ընկերութեան բաժինների կանոնադրութիւնը. Մի քանի թւանշաններ. Նամակ Նուխուց. Նամակ Խըմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարիզի չանտաժիստների գործը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական երևոյթներից.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԻՈՑԹՆԵՐԻՑ

Կ. Պօլսի «Հայրենիք» լրագրում այս ամառ տպագրվում էր մի վէպ «Հոգու Ջաւակ» վերնագրով, հեղինակութիւն Արփիար Արփիարեանի: Խոչոր պակասութիւններից զերծ չէ այդ գործը, բայց նրա գլխաւոր միտքը, նիւթը հետաքրքրական է, իբրև մեր ժամանակի կերպարանքը ցոլացնող մի պատկեր:

Նիւթը վերցրած է մի գրական մարդու կեանքից, մի մարդու, որին հեղինակը աշխատել է տալ համակրելի, այնիւ և անկաշառ գործիչի բոլոր յատկութիւնները: Նա իդէալացրած է: Տեսնում էք ամէն տեղ, որ նա անարատ է, համոզված մարտնչող, խիստ և անողոք իր գաղափարները պարզ ու որոշ կերպով արտայայտելու մէջ: Նա չրջապատված է գեղեցիկ հանգամանքներով. նա սիրված հեղինակ է և այդ սէրը ոչ միայն պլատօնական արտայայտութիւն է գտնում նրա տաղանդին մատուցրած մեծարանքների ու յարգանքների մէջ, այլ և ընդունում է մի կերպարանք, որ հոգու մաքրութեան, գեղեցիկ ձգտումների փառաւոր յաղթանակն է: Գրական մարդը, որի տոհմանունը Հաւարեան է, այն սակաւաթիւ ընտրեալներից մէկն է, որոնց չնորհված է կայծակ՝ ցնցել տալու, հասկացնելու համար. նա չը գիտէ կեղծել. նա լաւ մտրակում է, սուր ու հատու գրիչ ունի և նրանով անխնայ խոցոտում է հասարակական կարծրամորթ ցեցերին: Նրա թունաւոր նետերը միշտ չեշտակի չամփրում էին բուրժուա դասակարգը, անմտութեան հասած այն բարեմտութիւնը, որի կեանքն առաջի օրից մինչև վերջինը մի աստուածութիւն է ճանաչում—որովայնապաշտութիւն:

Այդ տարրը, ամենից բազմամարդը, ամենից ամուռը և ամենից շատ օժտվածը բուսական կեանքի ընդունակութիւններով, բոլոր ազգերի մէջ է կրում դառն հարուածներ առաջատար գործիչներից: Բայց թոյնն ու մտրակը չատ չեն ազդում իւղոտ, լպստած կաշու վրա, որի տակ հաստատված է արեան չրջանառութեան պէս մի անփոփոխ, միշտ թունաւոր, միշտ տաք և ապրող գաղափար—ուտել քնելու համար, քնել ուտելու համար: Հաւարեան հրաշք է գործում: Բուրժուական դասակարգից մի աղջիկ, Արուսեակ, կախարդվում է կծու, յարձակողական գրուածքներով և սիրահարվում է այդ գրչի տիրոջ վրա:

Գրական գործիչը, նա, որ այսպիսի մի փառաւոր յաղթանակ է տարել, ինչ կասկած, պիտի աւելի ևս ոգևորվի, աւելի ևս սիրտ առնի և դառնայ իր ուղղութեան ու մտքի մոլեռանդ մարգարէ, որ քարոզում է կատրների վրա, որ տանում է իր գրօչակը ամենաահեղ պատերազմական փոթորիկների մէջ: Երջանիկ է գործիչը, նրա վարձատրութիւնը այն երկրպագութիւնն է, որ կատարում է նրա առաջ բարձր խաւարից իջած մի գեղեցիկ, բարեկիրթ օրիորդ: Նուաճել մի այդպիսի սիրտ, խլել, դուրս քաշել այն քարացած աչխարհից—ասացէք, ով է արժանացել այդպիսի երջանկութեան: Հեղինակը, այդ աստիճան բարձրացնելով իր իդէալացրած հերոսին, անչուշտ կամենում է մեզ հիացնել ազնիւ ու անխարդախ մարտնչողի գաղափարով: Եւ մենք, իրաւ, հիացած առաջ ենք չտապում, որ մի վայրկեան առաջ տեսնենք, թէ ինչպէս պիտի այնուհետև գործէ հերոսը, թև ու թիկունք տուած այն հոգեկան հզօր ու անխորտակելի պատուարին, որ իր ծնրադրութիւններով ստեղծել է հարուստ դասակարգի աղջիկ Արուսեակը: Եւ չտապում ենք առաջ, բայց կանգ ենք առնում չչմացնող, իրական սառնութեան ու յուսաբեկ հիասթափման մէջ: Եւ տեսնում ենք մի խեղճութիւն, մի մոխրագոյն տափակութիւն, որ Հաւարեան է կոչվում:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

(Հեռագրով)

Մեր Թղթակիցը հեռագրում է մեզ Պետերբուրգից նոյեմբերի 24-ից հետևեալը.

„Լօնդօնից „Нов. Время“ լրագրին հեռագրում են, որ Լօնդօնի քաղաքական շրջաններում յանկութիւն են յայտնում, որպէս զի Ռուսաստանը յայտնէ, թէ ինչ է պահանջում ինքն՝ համաձայնութիւն կայացնելու նպատակով:

„Կիմբերլէյ ընդունեց հայոց ընկերութեան նախագահին, պարլամէնտի անդամ Սաելվնսօնին, և երկար խօսակցեց Փոքր-Ասիայի հայերի մասին:

„Լօնդօնի „Times“ լրագիրը կարծում է, որ Անգլիան պէտք է միջամտի և պետութիւնները պարտաւոր են բողոքել այդ զանութիւնների դէմ, սպառնալով Հայաստան ուղարկել մի էկսպեդիցիա, 1860 թւի սիրիական էկսպեդիցիայի նման“:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» նախընթաց համարում խօսելով Երեւանում Գիւղատնտեսական ընկերութեան բաժին բանալու մասին, մենք յայտնեցինք, որ այդպիսի մի ճիւղ բանալը չատ հեշտ է: Հարցը աւելի պարզելու համար առաջ ենք բերում այստեղ կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան կանոնադրութեան այդ կէտին վերաբերեալ յօդուածները:

I. Բաժիններ բացվում են խորհրդի բարեհայեցողութեամբ և ընկերութեան հավանաւորի հաստատութեամբ՝ այնքան, որքան կան նահանգներ կամ վարչական շրջաններ:

II. Բաժինները ընդունում են՝ իսկական պատւի և թղթակից անդամներ իրանց ընտրութեամբ և ներկայացնում կենտրօնական ընկերութեան հաստատութեան:

III. Այն նահանգներում, ուր ընկերութեան անդամներ չը կան, ընկերութիւնը կարող է նշանակել իսկական անդամների մի որոշ թիւ, որոնք և կը կազմեն ընկերութեան բաժինը:

IV. Իւրաքանչիւր բաժին ունի իր նախագահը և քարտուղարը: Նախագահի պաշտօնը վարում է տեղական իշխանութեան ամենաբարձր ներկայացուցիչը, օրինակ նահանգապետը: Քարտուղարը ընտրվում է նախագահի և բաժնի ընդհանուր ժողովի համաձայնութեամբ: Բաժինը ընտրում է փոխ-նախագահ, որ վարում է նախագահի պաշտօնը, երբ վերջինս հիւանդ է կամ բացակայ:

V. Բաժնի ընդհանուր ժողովները նշանակվում են այն ժամանակ, երբ հարկաւորութիւն ըղգացվի: Տարեկան ընդհանուր ժողովում կարդացվում են հաչիւներ և բաժանվում են պարգևներ, եթէ յատկացրած են տեղական գիւղատնտեսութեան:

VI. Բաժինը զբաղվում է տեղական գիւղատնտեսական կարիքները ուսումնասիրելով և նրանց բաւականութիւն տալու միջոցները հայթայթելով: Այդ կողմից բաժնի գործունէութեան ծաւալը չատ լայն է և ընդգրկում է տեղական գիւղատնտեսութեան ամենաբազմակողմանի պահանջները և կարիքները:

VII. Բաժինները ենթարկում են իրանց քննութեան տեղական գիւղատնտեսական ծրագիր-

---

Ահա թէ ինչպէս:

Ագրիպ էֆենդի անունով մի երիտասարդ կարիերիստ, որ իր դասակարգին յատուկ զարգացած հոտառութեամբ գտնում է համեղ պատառի տեղը, գիշատղի մտքերով պատրաստ է գալիս Արուսեակի չուրջը. այդտեղ տիրող հովերից իմանում է, թէ ով է իր հակառակորդը և վճռում է ոչնչացնել նրան: Ցաղթանակը տարած է եղել մըտաւոր կարողութիւնը. հարկաւոր է, ուրեմն, նրա դէմ հանել մի համացեղ հակադրութիւն. հարկաւոր է մրցութիւն, մաղնիսի մի աւելի ուժեղ ձգողութիւն: Բայց Ագրիպ էֆենդին մի տօրիչելեան դատարկութիւն է: Սակայն այդ ինչ վնաս է: Ամէն բոզէ պատրաստ է այդ մարդկանց մըտքին ու կարողութեան միակ մատչելի միջոցը, այն է, հակառակորդին չներով փախցնել գրական հրապարակից: Հարց ու փորձը պարզում է, որ Հաւարեանը անչայտ ծնողների զաւակ է, որ մի խնճոյ ձկնորս ստացել է նրան խանձարուրքում պատած՝ իրանց թաղի եկեղեցու բակում, պահել ու մեծացրել է իբրև հոգևորական: Պատրաստ է առատ ու բարելից նիւթը: Ագրիպ էֆենդին կանչում է մի խմբագրի, պատմում է այս փաստը, խնդրում է մի լաւ «դաղել» այն երիտասարդին: Խմբագիրը Մահմեդի դրախտումն է. վաղը, միւս օրը կամ երբ կը կամենան, նա կը գրէ լեղիով ու թոյնով շաղախած մի յօդուած, որի մէջ կը նկարագրէ այս հանգամանքը, կուրծք կը ծեծէ, օձիք կը պատռէ, դիլ-դիլ հառաչներ կը հանէ և այդ բոլորով կը խայտառակէ իր հակառակորդին, կոչնչացնէ նրան: Պատկերը վերին աստիճանի իսկատիպ է, իրական:

Աւելորդ է այդ պատկերը լուսաւորել, նա ամեն օր, ամեն ժամ կանգնած է մեր առաջ, ամեն օր սարսուռ է տարածում մեր մէջ իր այլանդակ կերպարանքով, իր ղղուելի պարագաներով, իր խայտառակ մերկութեամբ: Տպագրական մամուլը մի օր լոյս աչխարհ է հանում հայ խմբագրի հանճարի արտադրութիւնը, չը հարցնելով թէ ինչչո՞ւ, ում համար և ինչ հարկաւոր է այդ ցեխը: Հաւարեանի առաջ ղրած է փորձաքարը: Ցաղթանակի տօնը Արուսեակի տանը երեկոյթ կայ և Հաւարեանը գնում է այնտեղ, չիմանալով որ իրան մեղադրում են այն հանգամանքի մէջ, որ նա չէ ճանաչում թէ ովքեր են եղել իր ծնողները: Հաւաքված է մի հասարակութիւն, որ պրոնակալիզների բերանով կոչվում է «ընտիր», այսինքն ճարպի հաստութեան տակ տնքող բուրժուաներ, փողի տոպրակներ, փորի սորուկներ: Նրանք կարդացել են յօդուածը, հասկացել են և սառն ու արհամարհական ձևերով են ընդունում երիտասարդին: Գնա, հերոս, այնտեղ պիտի չամփրես բթամտութեան ծնունդները: Ի՞նչ են նրանք, որ քեզ պէս հասկանան, թէ ինչ է գաղափարի յաղթանակը: Ահա այդ յաղթանակի գեղեցիկ պտուղը. օրիորդն է, որ դիմաւորում է քեզ ինչպէս թեթեռնիկը, որ գիշերվայ խաւարի մէջ գտնելով իր սիրալոյսը, մեծարում է նրան իր անդուլ պտոյտներով, իր կատարեալ անձնազոհութեամբ:

Եւ հերոսը անցնում է առանձնասենեակը, ուր սեղանի վրա տեսնում է լրագիրը: Կարդում է յօդուածը, հասկանում է ամեն ինչ: Ինչի էք սպասում դրանից յետոյ, ընթերցող: Այդ լրութիւնը ոտնահարող մի պատիժ, կամքի և գաղափարի մի վիհ ոյժ, որ հանդէս բերված այդ ստոր, կեղտոտ միջոցի առաջ աւելի ևս լցվում է արդար բարկութեամբ, կրակոտ եռանդով, որը բարձրացնում է նրան ապականված միջավայրից, տանում է ստորաքարշ սողունների գլխի վրայով և չանթահարում է կեղծութիւնը, մտքի պոռնկութիւնը և իր անդրդուելի, ամէն փորսող տուող ցածրութիւն արհամարհող հոգու—մի հոգու, որի առաջ վառված են պաշտողի հրաչալի ճրագները—զօրութեամբ ապացուցանում է այդ «ընտիրների» ոչնչութիւնը, ապացուցանում է որ նա ամեն տգիտութիւնների մի խիտ հիւսուածք, յանդգնութիւն չը պէտք է ունենայ մօի և արեան

ՎԱՃԱՌՔԻ ԿՈՄԻՏԵ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Վաճառքի կոմիտէն կը յայտնէ, որ Ս. Խաչի տօնին առթիւ, Սեպտեմբեր 27-ին, Ուրբաթ օր, Ս. Էջմիածնի մէջ պիտի կատարուի ձիարշաւ, որուն մասնակցելու համար հրաւիրուած են Հայաստանի ձիարշաւի ընկերութիւնները։

Ձիարշաւի ծրագիրը հետեւեալն է.

1. Ժամը 10-ին՝ 3 վերստ հեռաւորութեան վրայ։
2. Ժամը 11-ին՝ 5 վերստ հեռաւորութեան վրայ։
3. Ժամը 12-ին՝ 7 վերստ հեռաւորութեան վրայ։
4. Ժամը 1-ին՝ 10 վերստ հեռաւորութեան վրայ։

Ձիարշաւի մասնակցելու համար ձիերը պէտք է ներկայանան Ս. Էջմիածնի մէջ, Սեպտեմբեր 26-ին, Հինգշաբթի օր, ժամը 5-ին

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՆԱՀԱՆՋԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ «ՄՇԱԿԻ» ԹԻ 15-ԻՆ

Ի. Ա. Ա. Ա

դօրձէնա գնացին Յարսկօէ-Սէլօ, ուր մի քանի օր կը մնան։

Հրատարակված է ներքին գործերի մինիստրի չրջաբերականը այս տարվայ սեպտեմբերի 3 ից, № 24, որ տեղի ունեցաւ մինիստրների մասնաժողովի 1894 թ. յուլիսի 4-ին բարձրագոյն հաստատված կանոնադրութեան հիման վրա, նախապէս համաձայնութիւն կայացնելով սինոդի օբեր-պրօկուրօրի հետ, որով չտունդիսաների ադանդը յայտարարված է ամենաէականներից մէկը եկեղեցական և պետական տեսակէտից, արդելելով չտունդիստական հասարակական ազօթատները։

Պետերբուրգի բօրսա։ Կալուածական բանկերի գրաւական թղթեր. թիֆլիս՝ 6%—101, 5%—99 բ., Քութայիս՝ 6%—101, 5%—99½ բուբլի։

ԿԱԱՆ, 23 նոյեմբերի։ Այսօր առաւօտ այստեղ օծվեց ռուսաց եկեղեցին։

ԼՕՆԴՕՆ, 23 նոյեմբերի։ «Times» լրագիրը հաստատում է Հայաստանի քրիստոնեայ ազգաբնակութեան վերաբերմամբ թիւրքաց զօրքերի կատարած զազանութիւնների լուրերը։ Անգլիան եռանդուռ առաջադրութիւններ արաւ Ռ. Դրան։

Ջինաստանը առաջարկեց վճարել Եապօնիային պատերազմական այնպիսի կօնտրիբուցիա, որպիսին կորոշէն Ջինաստանի հետ դաշնագիրներ կապած պետութիւնները, այն էլ 4% ռոկէ փոխառութեան ձևով, չը գրաւ դրած մաքսային եկամուտների գրաւականով։

Ջինական ծառայութեան մէջ գանվող Հէնէկէն աշխատում է հարիւր հազար զինուորներից բաղկացած մի զօրք կազմել, որի հրամանատարները լինեն եւրօպական օֆիցէրներ։ Շատ օֆիցէրներ, առաւելապէս գերմանացիներ, ընդունված են չինական ծառայութեան մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 նոյեմբերի։ Բարձրագոյն անուանական ուկազով երկրագործութեան և պետական կալուածների մինիստրին՝ բարեհաճութիւն է յայտնված կայսերական կամաւոր տնտեսական ընկերութեանը և Մօսկվայի կայսերական գիւղատնտեսական ընկերութեանը։ Բարձրագոյն հրամայված է հասցնել նրանց հրովարտակները, որոնցով հաստատվում են նրանց չնորհված իրաւունքները։ Բոլոր մնացած գիւղատնտեսական և տնտեսական ընկերութիւններին հրամայված է յայտնել, որ նրանց արդիւնաւէտ աշխատանքները յօգուտ ռուսաց գիւղատնտեսութեան միշտ կը գտնեն բարձրագոյն հովանաւորութիւն և խրախուսանք։

Թույլ է տրված «Одесскія Новости» լրագրի հատուկ վաճառումը։

ԲԵՐԼԻՆ, 24 նոյեմբերի։ Երէկ բացվեց ռէյխստագը։ կայսրն ասեց, որ խաղաղութեան պահպանումը աւելի ևս ամրապնդվեց։ Յանձին Ալէքսանդր III կայսրի գերմանական կայսրը ողբում է բարեկամին և փորձված նախանձախնդրին խաղաղութեան գործում։ Ներքին քաղաքականութեան վերաբերմամբ ասված է, որ կառավարութիւնը անհրաժեշտ է համարում եռանդով դիմադրել կորստաբեր հակակառավարչական գործունէութեան. մշակված օրինագիծը ուժեղացնում է պատժական միջոցները պետական կարգը ապահովելու համար. նախագիծ է մտցնվում նոյնպէս քրէական-դատաստանական գործավարութիւնը բարւոքելու և դատաստանական կանոնադրութիւնը կերպարանափոխելու մասին։ Կառաջարկվի որոշել, որպէս զի անմեղ դատապարտվածները իրաւունք ունենան վնասները յետ պահանջելու։ Ռէյխստագին կառաջարկվի նոր օրինագիծ ծխախոտի հարկի մասին և կայսրութեան ֆինանսական յարաբերութիւնները դաշնակից պետութիւնների հետ կանոնաւորելու մասին։

Բժշկական ընկերութեան այսօրվայ նիստում Բէրգման յայտնեց, որ ինքն հակաղիֆթէրիային դեղի 48 փորձեր է կատարել և որ վերջնական կարծիք հնարաւոր կը լինի կազմել միայն ժամանակով։ Վիրխօվ, մատնացոյց անելով բարեբար հետևանքների վրա, յայտնեց, որ բժիշկները պէտք է գործադրեն այդ միջոցը, չը նայելով օտար վնասակար հետևանքների հնարաւորութեանը, սակայն, այդ միջոցի գործածութեան սահմանը որոշելու համար պահանջվում են դեռ ևս բազմաթիւ հետազօտութիւններ։

ՎԻԵՆՆԱ, 24 նոյեմբերի։ Մի քանի օր շարունակվող վիճաբանութիւններից յետոյ, ընդհատագը վճռեց պահպանել մահվան պատիժը պատիժների նոր օրէնսդրութեան մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 նոյեմբերի։ Այսօր, Նիկոլայևսկայա զինուորական ինժեներային ակադեմիայի և ինժեներական դպրոցի 75-ամեակի օրը, զինուորական մինիստրը յայտնեց, որ Թագաւոր կայսրը բարեհաճեց ընդունել իր վրա վերոյիշեալ ակադեմիայի պատուոր նախագահի կոչումը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
ԱՌԱԻՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբու-

ժութեան, սիֆիլիս և վէներական հիւանդութիւնների։
Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.
Կ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.
Կէն-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթի։
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխլ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) ղ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ՆԿԱՐԻՉ ԵՆՈՎՔ ՆԱԶԱՐԵԱՆՑ
բացել է իր նկարների ցուցահանդէս, կալուածական բանկի շէնութեան մէջ։ Ցուցահանդէսը բաց է առաւօտեան 10—3 ժամը և երեկոյեան 5—10 ժամը։

ՄՈՒՏՔԸ 20 ԿՕՊԷԿ
Աշակերտների և երեխաների համար՝ 10 կ.
(№ 136) 1—3

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի
ՐԱՖՖԻ
„ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ“
Բ. տպագրութիւն
Անտիպ ծանօթութիւններով և յաւելուածներով.
Գինն է 2 բուբլի։
Յանկացողները արժէքը կանխիկ ուղարկելով կարող են դիմել ինձ՝ հետևեալ հասցէով։
Тифлисъ, Анна Раффи
Րաֆֆիի միւս աշխատութիւններից ցանկացողները պէտք է դիմեն նոյն հասցէով։
Հրատ. Այրի Աննա Րաֆֆի
(№ 135) 2—2



Միակ պահեստ կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում՝ բարձրագոյն կոմիսիայի կողմից ընդունված։ Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով։
№ 120. 90 թ. (4) 24—50

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԷՎԷԼԻՆԱ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՏԻԻԴ
ՈՐԻՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ա. ԴԱՍՏԱԿԵԱՆԻ
Հրատարակութիւն „Արօր“ տպարանի
ԳԻՆԸ 70 ԿՕՊ.
Ծախվում է Թիֆլիսում, Տէր-Սարգսեանի խանութում, Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Խոշղեկեղի դրավաճառանոցում։ (№ 137) 1—6

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104
Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թ. ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱԽՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիօնի ցուցահանդէսներում
Առաջարկում է նոր պատրաստած
ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . . .
„Театральныя“. . . . . 10 հատը 5 կոպ.
„Флора“. . . . . .
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.
կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—23



Ա. ԿՕՊՊԻ
ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ
(Միքայէլեան փողոց, № 132)
կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 բուբլուց մինչև 450 բուբլի արժողութեամբ։
(№ 119) 12—25

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
Ընդունում է երեվեկներ, կիսագիշերօթիկներ և գիշերօթիկներ։ Սօլօլակ, Դանօվսկայա փ. № 11. (№ 127) 10—10

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Վ. Ի. ՏԷՐ—ՅՈՎՍԷՓԵԱՆԻ
(Սօլօլակ, Սադօվայա, Սերգիևսկայա փողոց, Տէր-Մկրտչեանցի տան հանդէպ, № 46)
Կովկասեան Ուսումնարանական Շրջանի պ. Հոգաբարձուի թոյլտուութեամբ, այս տարվայ սեպտեմբերի 3-ից բացվում է դպրոց պանսիօնով (տղաների համար)։ Դպրոցում ընդունվում են երկսեռ մանուկներ՝ պատրաստելու համար նրանց մտնելու կառավարչական միջնակարգ դպրոցները։
Պայմանների մասին հարցնել պանսիօնում։ (№ 130) 6—6

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի աշխատասիրած
„ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“։
Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Ելիզաւետեան փողոց, տուն № 45, աշխատասիրողի այրին։
Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ճանապարհածախսը գնողների վրա է։
(№ 81

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА
HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է **ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ**, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կօպէկից մինչև 3 բուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-դրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագրները, հիւրերի համար անվարձ։ կայ ըէստօրան, տելեֆօն, քաղցրեղէնների խանութ, լրագրներ։
Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 110—130 (2·)

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Ноября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.